Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա:

Սուխոմլինսկի

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Նոր մոտեցումներ դաստիարակչական աշխատանքներում

Ծնողական ժողովների նախապատրաստման կանոնները

- Ծնողական ժողովի թեման պետք է լինի հրատապ և հետաքրքիր:
- Ծնողական ժողովը պետք է անցկացնել ծնողների համար հարմար ժամանակին:
- Ծնողները պետք է ծանոթ լինեն ժողովի օրակարգին:
- Ծնողների և դասղեկի շփումը պետք է անմիջական `էթիկայի կանոնների պահպանմամբ:
- Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն օգտակար և լավ նախապատրաստված:
- Ծնողական ժողովը պետք է սկսել լավ տրամադրությամբ և այն չպիտի տևի մեկ ու կես ժամից ավելի:
- Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ ,ապա անցնել խնդիրների քննարկմանը:
- Երեխաների ձեռքբերումները քննարկելիս խոսել նրանց ընդունակություններից և հնարավորություններից:
- Բացատրել ծնողին որ <<վատ>>աշակերտ բոլորովին չի նշանակում վատ մարդ:
- Ծնողը պետք է համոզվի ,որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն`օգնելու իր երեխային

Խուսափեք

- Նախատել ծնողներին բոլորի ներկայությամբ՝ նախորդ ժողովին չմասնակցելու համար:
- Համեմատել մի աշակերտին մյուսի հետ
- Բացասական գնահատական տալ ողջ դասարանին
- Գերագնահատել որևէ առարկայի դերը,
- Խոսել ծնողների հետ բարձր հրամայական տոնով:

Դասղեկը պետք է լինի անաչառ, բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի մեծ զգացում:

Ծնողական ժողովների ձևերն ու փուլերը

Ծնողական ժողովները կարող են լինել

1	կազմակերպչական
2	թեմատիկ
3	համադպրոցական
4	դասարանական
5	ամփոփիչ

Ծնողական ժողովների ժամանակ հանդիպում են

ուսումնական գործընթացին մասնակցող երկու կողմերը՝

<u>մանկավարժներն ու ծնողները</u>,

որպեսզի լսեն միմյանց և քննարկեն երրորդ կողմի՝

երեխաների խնդիրները:

Ծնողական ժողովների անցկացման փուլերը

Առաջին փուլ

Նախապատրաստում

- Ժողովի նպատակի ընտրություն
- Ժողովի մասնակիցների կազմի ընտրություն
- Աշակերտների առաջադիմության թերթիկի նախապատրաստում
- Դասասենյակի ձևավորում
- Իրազեկում

Երկրորդ փուլ

Անցկացում

- Դասրանի աշակերտների առաջադիմության վերլուծություն
- Դասարանում տիրող սոցիալհոգեբանական մթնոլորտի ներկայացում
- Հոգեբանամանկավարժական խորհրդատվություն
- Կազմակերպչական աշխատանքների քննարկում
- Անհատական զրույց ծնողների հետ

Ծնողական ժողովների անցկացման փուլերը

Արդյունքների ամփոփում

- Կատարել եզրակացություններ
- Կայացնել որոշումներ
- Ճշտել ծնողների կարծիքը ժողովի մասին
- Նախապատրաստել հարցաթերթիկներ ծնողների գնահատականների, առաջարկությունների, հարցերի վերաբերյալ:
- Ծնողական ժողովի արդյունքների մասին անհրաժեշտ է տեղեկացնել տնօրինությանը: